ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 42 - 43 (16340) ՇԱԲԱԹ, 20 ՀՈՒՆԻՍԻ 2015 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ՏԱՐԵՐՔ

ՆՄԱՆ ՋՐՀԵՂԵՂ ԹԲԻԼԻՍԻՆ ՉԻ ՀԻՇՈՒՄ



Հունիսի 13-լույս 14-ի գիշերը Թբիլիսիում տեղացած հորդառատ անձրեւը քաղաքի կենտրոնական հատվածում դարձավ հզոր սողանքի, ջրհեղեղի ու մարդկային զոհերի պատճառ:

Թբիլիսիից ոչ հեռու 20-25 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Ծղնեթիին հարող բարձունքներից սկիզբ առնող, սովորաբար սակավաջուր Վերե գետակը, անցնելով Բագեբիով, հոսում է դեռեւս անցյալ դարի 50-ական թվականների վերջերին շահագործման հանձնված Վակե-Սաբուրթալո տանող ճանապարհի տակ կառուցված թունելով, ապա անցնում «Մզիուրի» մանկական զբոսայգու եւ կենդանաբական այգու մերձակայքով, Հերոսների հրապարակում կրկին «սուզվելով» ստորգետնյա թունելի մեջ, թափվում է Քուռ գետը: Տեւական անձրեւների արդյունքում՝ `գետակի ակունքներում մեծածավալ սողանքները, Ծղնեթի-Մանգլիսի ճանապարհի շուրջ մեկ կիլոմետրանոց փլուզված հատվածը, գրեթե մեկ միլիոն տոննա ցեխախառն զանգված՝ արմատախիլ արված ծառերով, փակեցին կիրճով անցնող գետակի հունը, առաջացնելով յուրատեսակ ամբարտակ, որի ետեւում կուտակվեց մեծ քանակության անձրեւաջուր, տիղմ: Ջրի ճնշման տակ ինքնին ստեղծված ամբարտակը քանդվեց եւ վիթխարի զանգվածը դուրս գալով Վերե գետակի հունից, հորդեց Թբիլիսիի Վակեի թաղամասից դեպի Հերոսների հրապարակ տանող մայրուղու վրա, իր ջրապտույտում առնելով այդ պահին մայրուղում գտնվող մեքենաները, ապա հեռուստատեսության շենքի մերձակայքում փոխելով ուղղությունը, հոսեց դեպի Քուռ գետի աջափնյակ տանող ճանապարհը: Գործնականում լրիվությամբ ոչնչացվեց մայրաքաղաքի կենդանաբանական այգին, լուրջ վնաս հասցվեց Սաբուրթալոյի գերեզմանատանը, ավերվեցին շենքեր, ճանապարհներ, հարյուրավոր մարդիկ մնացին անօթեւան: Կենդանաբանական այգու ավերված վանդակներից քաղաքով մեկ սփռվեցին տասնյակ ու տասնյակ կենդանիներ՝ առյուծներ, վագրեր, արջեր, գայլեր, շնագայլեր, կոկորդիլոսներ, գետաձի...

Տարերքի պահին ոչ մեկը չէր խոսում հասցրած վնասի չափի մասին, քանզի զբաղված էին առավել կարեւոր գործով՝ փնտրում էին տարերքի զոհ դարձածների մարմիններն ու փորձում էին փրկել կենդանաբանական այգու տարերքից տուժած կենդանիներին:

Արդեն կիրակի առավոտյան հայտնի դարձավ, որ զոհվել են շուրջ տասը մարդ, եւս տասը՝ անհայտ կորած են համարվում, թեպետ բացառված չէ, որ զոհերի թիվը շատ ավելի մեծ լինի:

Այդ օրը շուրջ հինգ ժամվա ընթացքում տեղացող հորդ անձրեւի առաջացրած հեղեղը ողջ քաղաքի համար ստեղծեց բարդ իրավիճակ, ստորգետնյա ջրատարներն ուղղակի ի վիճակի չէին անցկացնելու նման ծավալի հոսքերը:

Հենց այդ տարածքում էլ մի քանի տարի առաջ մայրաքաղաքը մեքենաների հոսքից բեռնաթափելու նպատակով,

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՏԱՐԵՐՔԻ ՏՈՒԺԱԾՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԵԼ Է 15,2 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ»

Վրաստանում այս փուլում 15,2 մլն լարի է մոբիլիզացվել Թբիլիսիում օրերս տեղի ունեցած ջրհեղեղից տուժածներին օգնություն ցուցաբերելու եւ աղետի հետեւանքների վերացման համար:

Այդ մասին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց արտակարգ շտաբի նիստում՝ ամփոփելով պետական կառույցների եւ կամավորների կատարած աշխատանքի արդյունքները:

«Մեկ անգամ եւս ցանկանում եմ շնորհակալություն հայտնել բոլոր այն մարդկանց, ով-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՋՐՀԵՂԵՂԻՑ ՏՈՒԺԵԼ Է 457 ՄԱՐԴ

Հունիսի 13-ի լույս 14-ի գիշերը Թբիլիսիում տեղի ունեցած ջրհեղեղի արդյունքում տուժել է 457 մարդ, այդ թվում՝ 119 երեխա: Այդ մասին տեղեկացրել է պետական անվտանգության եւ ճգնաժամերի կառավարման խորհուրդը:

«Տարերային աղետի արդյունքում տուժյալ բնակչությունից Վրաստանի առողջապահության նախարարությունը գրանցել է 106 ընտանիք, ընդամենը՝ 457 մարդ, որից 119 երեխաներ են, 56-ը՝ տարեցներ, եւ 5-ը՝ հղի: Հարցումը անցկացվել էր հատուկ մշակված հարցաթերթիկով եւ տուժյալներին օգնությունը կցուցաբերվի, ելնելով անհատական պահանջմունքներից»,- ասված է խորհրդի հաղորդագրության մեջ: Հիշեցնենք, որ կործանարար ջրհեղեղի արդյունքում զոհվել է 19 մարդ եւ 3-ը՝ անհայտ կորած են համարվում:

ԿԿԱՆԳՆԵՑՎԻ ՏԱՐԵՐՔԻ ԶՈՀԵՐԻ ՀՈՒՇԱԿՈԹՈՂ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց, որ Թբիլիսիում տեղի ունեցած տարերքի զոհերի հիշատակի հավերժացման համար կկանգնեցվի հուշակոթող: Վարչապետը տիկնոջ հետ միասին՝ հունիսի 18-ին այցելեց տարերքից բոլորից շատ տուժած մայրաքաղաքի Սվանիձեի փողոց, ծաղիկներ դրեց զոհերի հիշատակի խորհրդանշական հուշարձանին:

ՎՐԱՍՏԱՆ-ԲՈՒԼՂԱՐԻԱ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ԵՎ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

Հունիսի 17-ին, երկօրյա աշխատանքային այցով, Թբիլիսի ժամանեց Բուլղարիայի նախագահ Ռոսեն Պլեվնելիեւը:

Հյուրի պաշտոնական դիմավորման արարողությունն անցկացվեց Վրաստանի նախագահի Հավլաբարի նստավայրում: Արարողության ավարտից հետո անցկացվեց Վրաստանի եւ Բուլղարիայի նախագահների առանձնազրույցը, որից հետո կայացավ երկու երկրների պատվիրակությունների ընդլայնված հանդիպումը: Հանդիպմանը քննարկվեցին Հյուսիսատլանտյան ալյանսին եւ Եվրամիությանը Վրաս-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՅԱՎԱԿՅԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Հունիսի 14-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը ցավակցական հեռագիր է հղել Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլուն՝ Թբիլիսիում նախորդ գիշեր տեղի ունեցած հեղեղումների հետեւանքով մարդկային զոհերի, անհետ կորածների եւ ավերածությունների կապակցությամբ: Հայաստանի նախագահն իր անկեղծ զորակցությունն է հայտնել Գիորգի Մարգվելաշվիլուն եւ բարեկամ Վրաստանի ժողովրդին՝ սփոփանքի խոսքեր հղելով տուժածների եւ զոհվածների հարազատներին ու ընտանիքներին:

Թբիլիսիում տեղի ունեցած ջրհեղեղի հետեւանքով մարդկային զոհերի եւ ավերածությունների կապակցությամբ, Վրաստանի ղեկավարությանը ցավակցական հեռագրեր են հղել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Հայաստանի ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանը, Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը:

Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանը, հեռախոսազրույց է ունեցել Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու հետ՝ Թբիլիսիում տեղի ունեցած ավերիչ ջրհեղեղի կապակցությամբ: Հովիկ Աբրահամյանը ցավակցություն է հայտնել Իրակլի Ղարիբաշվիլուն եւ առաջարկել հայկական կողմի աջակցությունը:

Վրաստանի վարչապետը շնորհակալություն է հայտնել Հովիկ Աբրահամյանին ցավակցության եւ աջակցության առաջարկի համար:

Հայաստանի վարչապետը հանձնարարել է ՀՀ ՏԿԱԻ նախարար Արմեն Երիցյանին շարունակել համագործակցությունը Վրաստանի իր գործընկերոջ հետ՝ ըստ անհրաժեշտության համապատասխան աջակցություն վրացական կողմին ցուցաբերելու համար:

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

«ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՈՒՂԻ» ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ԲԱԹՈՒՄԻՈՒՄ

Հունիսի 18-ին Բաթումիում աշխատանքն սկսեց «Վրաստանի եվրոպական ուղի» խորհրդաժողովը, որի օրակարգում «Արեւելյան գործընկերության» գագաթաժողովի արդյունքներին եւ Եվրամիության հետ ասոցիացման համաձայնագրին վերաբերող հարցերն էին:

Խորհրդաժողովի բացմանը ելույթ ունեցան Վրաստանի եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման հարցերով պետնախարար Դավիթ Բաքրաձեն, Բուլղարիայի նախագահ Ռոսեն Պլեվնելիեւը, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, արտաքին գործերի նախարար Թամար Բերուչաշվիլին, Լիտվայի արտաքին գործերի նախարար Լինաս Լինկեւիչուսը, Լատվիայի խորհրդարանի փոխխոսնակ Ինես Լեբինյաէգները:

ՏԱՐԵՐՔ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՏԱՐԵՐՔԻ ՏՈՒԺԱԾՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԵԼ է 15,2 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

քեր անգնահատելի ավանդ են ներդնում տարերքի հետեւանքների վերացման գործում, այդ թվում՝ զինվորականներին, ուսանողներին, մարզիկներին, կամավորներին եւ ուրիշների»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Վրաստանի կառավարության ղեկավարն ընդգծեց Եվրահանձնաժողովի ցուցաբերած օգնության կարեւորությունը, որը դրամաշնորհի տեսքով 3 մլն եվրո է հատկացրել ջրհեղեղի հետեւանքները վերացնելու համար:

Վրաստանի ֆինանսների նախարարության որոշմամբ, պետական գանձարանում հունիսի 15-ին բացվել են հատուկ հաշիվներ, ուր բոլոր ցանկացողները կարող են միջոցներ փոխանցել Թբիլիսիում ջրհեղեղից տուժածներին օգնելու, ինչպես նաեւ տարերային աղետի հետեւանքների վերացման ծախսերը ֆինանսավորելու համար: Հատուկ հաշվիներ են բացվել՝ ինչպես ազգային, այնպես էլ օտարերկրյա արժույթով:

Վրաստանի վարչապետը հայտարարել է նաեւ, որ չի պլանավորվում ծերբակալել Թբիլիսիի կենդանաբանական այգու տնօրեն Զուրաբ Գուրիելիձեին, որին հունիսի 18-ին հարցաքննության են կանչել դատախազություն: Ավելի վաղ դատախազությունը քրեական գործ էր հարուցել «ծառայողական անփութություն» հոդվածով այն բանից հետո, երբ ավերիչ ջրհեղեղի հետեւանքով Թբիլիսիի կենդանաբանական այգուց փախած վագրը հունիսի 17-ին մարդ է հոշոտել քաղաքի կենտրոնում:

ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ԹՅՈՒՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հունիսի 17-ին Վրաստանի բնակչությունից ներողություն խնդրեց այն հայտարարության համար, որ Թբիլիսիի փողոցներում այլեւս գիշատիչներ չկան:

Հեղեղման ժամանակ Թբիլիսիի կենդանաբանական այգուց փախած վագրը հունիսի 17-ին հարձակվել է մի տղամարդու վրա, որն ստացած վնասվածքներից մահացել է: Կենդանին թաքնված է եղել կենդանաբանական այգուց ոչ հեռու գտնվող «Լագունա Վերե» լողավազանի մերձակա պահեստում եւ հարձակվել է մարդու վրա այն պահին, երբ նա ներս էր մտնում:

Գիշատչի վնասազերծման գործողության վայրում եղել են Վրաստանի ՆԳ նախարար Վախթանգ Գոմելաուրին, ինչպես նաեւ Թբիլիսիի կենդանաբանական այգու տնօրեն Զուրաբ Գուրիելիձեն: Տեղեկատվության համաձայն, ալբինոս-վագրն սպանվել է հատուկ ջոկատայինների կողմից:

«Ես ցանկանում եմ ներողություն խնդրել հասարակությունից ոչ ճիշտ տեղեկատվության տարածման համար, չնայած այն բանին, որ այդ տեղեկատվությունը հիմնվում էր կենդանաբանական այգու տրամադրած տեղեկատվության վրա... Կենդանաբանական այգու տնօրենը քանիցս հայտնել էր արտակարգ շտաբին, ՆԳ նախարարությանը, որ այդ կենդանիներն այլեւս չկան փողոցներում»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին՝ հունիսի 17-ին կայացած արտակարգ խորհրդակցության ընթացքում:

Նշենք, որ ավելի ուշ Թբիլիսիի կենդանաբանական այգու վարչակազմը հայտնել էր, որ փնտրում է երկու արջերի, վագրի եւ բորենու:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎՐԱՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՑ

Թբիլիսիում տեղի ունեցած ջրհեղեղների հետեւանքների վերացման համար, որպես ֆինանսական օգնություն եվրահանձնաժողովը որոշում է ընդունել Վրաստանին հատկացնել 3,4 միլիոն դոլար:

Ինչպես հայտարարվել է եվրահանձնաժողովում, հունիսի 15-ին Վրաստանի իշխանությունը Եվրամիության երկրներին ջրհեղեղների հետեւանքների վերացման համար ֆինանսական եւ փորձագիտական օգնություն է խնդրել: Վրաստանին հատկացվել է բյուջետային աջակցության 3 միլիոն դոլարի գումար: Բացի այդ, որպես մարդասիրական օգնություն Վրաստանին հատկացվում է 400 հազար դոլարի գումար:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վրաստանի արտաքին գործերի նախարար Թամարա Բերուչաշվիլին հայտարարեց, որ երկիրը Թբիլիսիում տարերային աղետից հետո բազմաթիվ առաջարկություններ է ստանում հումանիտար, ֆինանսական, փորձագիտական օգնության վերաբերյալ, եւ նշեց, որ Վրաստանն ամեն տեսակ օգնության կարիք ունի:

Կարկուտով եւ քամիով ուղեկցվող տեղատարափը Թբիլիսիում մոլեգնել է 13-լույս հունիսի 14-ի գիշերը: Դրա հետեւանքով վնասվել են բնակելի շենքեր, ճանապարհներ, ենթակառույցային օբյեկտներ: Ավերվել է կենդանաբանական այգին:

«Վրաստանը համերաշխության, զորակցության, ցավակցության հաղորդագրություններ է ստանում մեր գործընկերներից, բարեկամ երկրներից՝ վարչապետերի, նախագահների ու սովորական քաղաքացիների մակարդակով: Եվրամիության արտակարգ իրավիճակների կառավարման խորհուրդը լիակատար կոորդինացում է իրականացնում Վրաստանի համապատասխան գերատեսչությունների հետ եւ անհրաժեշտության դեպքում պատրաստ կլինի օգնություն ցուցաբերել, որն այժմ այնքան անհրաժեշտ է Վրաստանին: Վրաստանի արտաքին գործերի եւ ֆինանսների նախարարություններն աշխատում են, որպեսզի հնարավորինս շուտ մոբիլիզացվի ֆինանսական օգնությունը դոնորական կազմակերպություններից ու գործընկերներից»,- հայտարարեց Թամար Բերուչաշվիլին:

Վրաստանի ԱԳ նախարարի խոսքով՝ երկիրը պատրաստ է ընդունելու ամեն տեսակ օգնություն, այդ թվում՝ փորձագիտական, տարերային աղետի հետեւանքները հաղթահարելու համար: «Խոսքն ամեն տեսակ օգնության մասին է, Վրաստանին ու Թբիլիսիին օգնություն է անհրաժեշտ այժմ, այս րոպեներին: Բայց դրա հետ միասին մենք աշխատում ենք միջազգային մակարդակով փորձագիտական օգնության կազմակերպման ուղղությամբ, որպեսզի կանխվեն նման հետեւանքները»,- հավելեց Վրաստանի ԱԳ նախարար Թամար Բերուչաշվիլին:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏԻՑ ՏՈՒԺԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ

ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏՈՒՄ ՀԱՆԳԱՆԱԿՎԵԼ է ՄՈՏ 23 ՀԱԶԱՐ ԼԱՐԻ

Հունիսի 13-լույս 14-ի գիշերը Թբիլսիում տեղի ունեցած ավերիչ ջրհեղեղը լուրջ վնաս հասցրեց քաղաքի ենթակառույցներին, դարձավ մարդկային զոհերի պատճառ, տասնյակ ընտանիքներ մնացին անօթեւան: Պաշտոնական տվյալներով, ջրհեղեղի հասցրած վնասը գերազանցում է 100 միլիոն լարին:

Երկրի ողջ մասշտաբով բարեգործական միջոցառումներ են անցկացվում տարերքից տուժյալներին օգնության հիմնադրամ միջոցներ փոխանցելու նպատակով: Այսպես, «Իմեդի» հեռուստաընկերության կողմից անցկացրած հեռուստամարաթոնի միջոցով հանգանակվել է 1 563 197 լարի:

Մարդասիրական այդ շարժումից անմնասն չմնաց նաեւ Նինոծմինդայի մունիցիպալիտետը: Նախնական տվյալներով, այստեղ հանգանակվել ու տուժյալների հաշվի վրա է փոխանցվել մոտ 23 հազար լարի: Մենք հեռախոսով կապվեցինք մունիցիպալիտետի վարչության նախագահ Գագիկ Կարսլյանի հետ: Ահա թե ինչ ասաց նա.

- Նախ, ցանկանում եմ մեր շրջանի մարդկանց անունից խոր ցավակցություն հայտնել տարերքից զոհվածների ընտանիքներին ու տուժյալներին: Նաեւ ցանկանում եմ խորին շնորհակալություն հայտնել մեր նինոծմինդացիներին՝ ցուցաբերած մարդկայնության համար: Ճիշտ է, հանգանակության անցկացման նախաձեռնությամբ հանդես եկան Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Հենեզ Մկոյանն ու մեր վարչությունը, թեպետ, ի պատիվ մեր քաղաքացիների, պետք է ասեմ, որ առանց այդ էլ վարչությունում տեղեկատվություն էր ստացվում կամավոր հանգանակություններ անցկացնելու վերաբերյալ: Մունիցիպալիտետի վարչությունում մենք կազմեցինք հատուկ հանձնաժողով, որն էլ ստանձնեց հանգանակությունների գանձման, դրա հաշվառման ու փոխանցման գործառույթը: Մունիցիպալիտետի կողմից տուժյալների հիմնադրամ առաքած գումարի ծեւավորման գործում իրենց նշանակալի ավանդը ներդրեցին վարչության ու սակրեբուլոյի անդամները, տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմի ներկայացուցիչները, վարչության հետ պայմանագրային կապ ունեցող ոչ կոմերցիոն ընկերությունները, ինչպես նաեւ բազում շարքային քաղաքացիներ:

Այն, ինչ տեղի ունեցավ Թբիլիսիում, մեզանից յուրաքանչյուրն ընդունեց սրտին մոտ: Կրկին ցավակցում ենք զոհվածների ընտանիքներին եւ հնարավորինս անում տուժյալների վիճակի թեթեւացման համար: Ամենայն հավանականությամբ, հանգանակության գործընթացը կշարունակվի:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ



ԱՄՆ

ՎԻԶԱՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՎԵԼ է

Միացյալ Նահանգների բոլոր դեսպանատներում ժամանակավորապես դադարեցվել է վիզաների ու արտասահմանյան անձնագրերի տրամադրումը: ԱՄՆ պետդեպարտամենտը դա բացատրել է անսարքությունների առկայությամբ: Պետդեպարտամենտի տարածած հաղորդագրության մեջ նշվում է, որ անսարքության հնարավոր պատճառ կարող է լինել դեսպանատների ու հյուպատոսարանների տվյալների բազան պահող սարքավորման աշխատանքի խափանումը:

Չի բացառվում, որ հունիսի 9-ից հետո դիմում ներկայացրած անձինք բախվեն փաստաթղթերի ձեւակերպման հետ կապված ուշացումների խնդրին:

ՉԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՉԱՌԼՍԹՈՆՈՒՄ

Հունիսի 18-ին Չառլսթոն քաղաքի մեթոդիստական եկեղեցում հրաձգության հետեւանքով զոհվել է ԱՄՆ-ի Հարավային Կարոլինայի նահանգի Սենատի անդամ, պաստոր Քլեմենտա Փինկնին:

Ավելի վաղ իրավապահ մարմիններում հավաստել են ինը մարդկանց զոհվելը: Նրանց տվյալներով, հրազենային վերքերից ութ հոգի մահացել է տեղում, եւս մեկը՝ հիվանդանոցում:

Սպանությունը 21-ամյա Դիլան Ռուֆն է իրականացրել:

Քաղաքագլուխ Ջոզեֆ Ռայլիի հայտարարության համաձայն՝ ողբերգությունը կհետաքննեն որպես ատելության հողի վրա կատարված հանցագործություն:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՔՆՆԱՐԿՎԵԼՈՒ է ՀՈՒՆԱՍՏԱՆԻՆ ԴԵՖՈԼՏԻՑ ՓՐԿԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

Դեֆոլտից Հունաստանին փրկելու խնդիրը քննարկվելու է եվրոգոտու պետությունների ղեկավարների մակարդակով: Եվրոգոտու երկրների ղեկավարների ոչ պաշտոնական գագաթաժողովը, որը նվիրված կլինի Աթենքի համար վարկերի թեմային, հունիսի 22-ին տեղի կունենա Բրյուսելում:

«Եվրախորհրդի նախագահ Դոնալդ Տուսկի կողմից հրավիրված եվրոգոտու գագաթաժողովը կկայանա Եվրամիության՝ հունիսի 25-26-ին Բրյուսելում պլանավորված գագաթաժողովից ընդամենը երկու օր առաջ:

Գերմանիայի, Բելգիայի, Լիտվայի եւ Սլովենիայի ֆինանսների նախարարները Հունաստանի կառավարությունից պահանջել են կատարել երկրի տնտեսության մեջ բարեփոխումներ իրականացնելու պարտավորությունները, որոնք նա ստանձնել է միջազգային վարկատուների հանդեպ:

ԿՈՐԵԱ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԶՈՀԵՐԻ ԹԻՎՆ ԱՃՈՒՄ է

Հարավային Կորեայում մերձավորարեւելյան շնչառական համախտանիշի կորոնավիրուսից (MERS) մահացածների թիվը հասել է 20-ի: Ավելի վաղ հաղորդվել էր 19 մահացածների եւ 162 վարակվածների մասին: Կարանտինային ռեժիմ է հանձնարարված 6,5 հազար մարդու:

Կորոնավիրուսով հիվանդանալու առաջին դեպքը Հարավային Կորեայի տարածքում գրանցվել է մայիսի 20-ին:

Կորոնավիրուսն առաջին անգամ մարդու մոտ բացահայտվել է 2012 թվականին Սաուդյան Արաբիայում: Դրանով վարակվելու դեպքեր են գրանցվել Հորդանանում, Քատարում, Արաբական Միացյալ Էմիրություններում, Թունիսում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Իտալիայում, Ֆրանսիայում, ընդամենը 23 երկրներում, որտեղ պաշտոնապես հաստատվել է մարդկանց վարակվելու ավելի քան 1100 դեպք, որոնց 40 տոկոսը մահացու ելք է ունեցել:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎՐԱՍՏԱՆ-ԲՈՒԼՂԱՐԻԱ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ԵՎ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տանի ինտեգրման, երկու երկրների համագործակցության հետ առնչվող հարցերը:

Բուլղարիան կրկին հավաստեց իր դիրքորոշումը՝ Վրաստանի տարածքային ամբողջականության հարցում:

Բանակցություններից հետո անցկացվեց երկու երկրների նախագահների համատեղ մամլո ասուլիսը, որից հետո Բուլղարիայի նախագահը Գիորգի Մարգվելաշվիլու ուղեկցությամբ այցելեց Թբիլիսիի աղետի գոտի, ծաղիկներ դրեց ջրհեղեղի զոհերի խորհրդանշական հուշակոթողին:

Այցի շրջանակներում՝ Բուլղարիայի նախագահ Ռոսեն Պլևնելիեւը հանդիպում ունեցավ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի, խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլու, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու հետ:

Թբիլիսիում պաշտոնական այցի ավարտից հետո, Բուլղարիայի նախագահը մեկնեց Բաթումի, որտեղ մասնակցեց «Վրաստանի եվրոպական ուղի» միջազգային խորհրդաժողովին: Բաթումիում Բուլղարիայի նախագահը հանդիպում ունեցավ Աջարիայի կառավարության նախագահ Արչիլ Խաբաձեի հետ:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ԸՆԴՈՒՆՎԵՑ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ

Հունիսի 12-ին Վրաստանի խորհրդարանն երրորդ ընթերցմամբ ընդունեց անչափահասների իրավունքի օրենսգիրքը:

Հիմնական սկզբունքները, որի վրա հիմնված է օրենսգիրքը, դա անչափահասների շահերի առաջնահերթությունն է, միայն բացառիկ դեպքերում ձերբակալությունն ու արգելափակումը, անհատական մոտեցումը, նորմալ պայմաններում պատիժը կրելը, այլընտրանքային պատժամիջոցների այլընտրանքի առաջնահերթությունը:

Օրենսգրքի նպատակն է՝ ներդնել երեխաների կողմնորոշված հատուկ արդարադատություն եւ հաստատել անչափահաս մեղադրյալների, տուժյալների եւ վկաների նկատմամբ հատուկ մոտեցումներ: Դա Վրաստանի համար բացարձակապես նոր ինստիտուտ է եւ իրենից ներկայացնում է ոչ միայն նորարական, այլեւ հեղափոխական նախագիծ վրաց արդարադատության համակարգում:

Անչափահասների գործերով կզբաղվեն միայն հատուկ նախապատրաստություն անցած քննիչները, դատավորները, դատախազները, ոստիկանները, փաստաբաններն ու սոցիալական աշխատողները: Անչափահասների նկատմամբ կգործի միայն դատարանում որպես վկա հարցաքննելու սկզբունքը: Անչափահասների համար նախակալանքի ժամկետը 60-ից կնվազեցվի մինչեւ 40 օրը: Անչափահասի նկատմամբ դատվածությունը կհանվի պատժաժամկետի ավարտից անմիջապես հետո:

Օրենսգիրքը մշակել է Վրաստանի արդարադատության նախարարությունը՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի եւ Եվրամիության համագործակցությամբ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԽԱՐՏԻԱՆ

Հունիսի 19-ին Բաթումիում Վրաստանի ԱԳ նախարար Թամար Բերուչաշվիլին եւ Լիտվայի ԱԳ նախարար Լինաս Լինկյավիչուսը ստորագրեցին եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման խարտիան:

Փաստաթուղթը նախատեսում է աջակցություն Վրաստանի եվրոպական եւ եվրատլանտյան կառույցներին ինտեգրման հարցում, ինչպես նաեւ Վրաստանի ու Լիտվայի միջեւ համագործակցության խորացում: Խարտիան ստորագրվեց Բաթումիում անցկացվող «Վրաստանի եվրոպական ուղի» խորհրդաժողովի շրջանակներում:

Կողմերը պայմանավորվեցին փորձի փոխանակում մի շարք հարցերի վերաբերյալ: Լիտվան պատրաստ է արտակարգ օգնություն ցուցաբերել Եվրամիության հետ ասոցիացման համաձայնագրով նախատեսված միջոցառումների իրականացման, ինչպես նաեւ վարչարարական ու ինստիտուցիոնալ հնարավորությունների զարգացման գործում:

Խարտիան նախատեսում է նաեւ սերտ համագործակցություն ՆԱՏՕ-ին Վրաստանի ինտեգրման հարցում: Բացի այդ, խարտիայի հիման վրա պարբերաբար կանցկացվեն եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման հարցերով հանձնաժողովի նիստեր:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՆՈԴԱՐ ԽԱԴՈՒՐԻ. «ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԴԱԴԱՐԵՑՎԵԼ Է»

Ինչպես տեղեկացրեց Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին, պետբյուջեի փոփոխման գործընթացը դադարեցվել է, քանի որ երկրի ֆինանսական գլխավոր փաստաթղթում կատարվելիք փոփոխությունները դեռեւս հստակեցվելու են:

Ինչպես հայտարարեց Խադուրին, պարտադիր կարգով փոխանցումներ են իրականացվելու Թբիլիսիի բյուջե, իսկ դրա համար անհրաժեշտ է որոշակի ժամանակ:

«Բյուջեի վերանայման գործընթացը դադարեցվել է: Մենք ստիպված ենք լրացուցիչ ռեսուրսներ փոխանցել Թբիլիսիի բյուջե, քանի որ այդ նպատակով հատկացված 10 միլիոն լարին բավական չէ: Մենք աշխատում ենք միջազգային ֆինանսական ինստիտուտների, հարեւան երկրների հետ, ելնելով ստեղծված իրավիճակից, մենք բյուջեի մշակման գործընթացը դադարեցրել ենք»,- հայտարարեց Նոդար Խադուրին:

ՀԱՐԿԵՐ

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՏԱՐԱՆՑՎՈՂ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԻՆ

Վրաստանի տարանցման երկիր ներկրած ավտոտրանսպորտի տերերը այսուհետեւ հարկագանձման ժամանակահատվածում կարող են օգտվել արտոնություններից:

Համապատասխան նախագիծը երկրի հարկային օրենսգրքի փոփոխություններով արդեն ներկայացվել է խորհրդարանի քննարկմանը: Մասնավորապես, նման ավտոմեքենաների տերերին մեքենայի գրանցման համար տրվում է 180 օր:

Նման փոփոխությունը պայմանավորված էր նրանով, որ Ադրբեջանը խստացրեց մեքենաների ներկրման պայմանները, իսկ Հայաստանն անդամակցեց Եվրասիական միությանը, ինչը բարդություններ առաջացրեց հարեւան երկրներում մեքենաները վերավաճառելու նպատակով Թբիլիսի ներկրած ավտոմեքենաների տերերի համար: Արդյունքում, նրանք հարկային օրենսգրքով սահմանված 45 օրվա ընթացքում չէին հասցնում վերագրանցել մեքենաները, ինչի արդյունքում սահմանվում էին տուգանքներ: Մեքենաների գներն աճում էին եւ դրանց վաճառքն է՛լ ավելի էր դժվարանում: Օրինանախագիծը նախատեսում է նաեւ այդ ժամանակահատվածում սահմանված բոլոր տուգանքների վերացում: Նշենք, որ վերոնշյալ փոփոխությունը վերաբերում է բոլոր այն ավտոմեքենաներին, որոնք ներկրվել են մինչեւ 2015 թվականի մայիսի 1-ը:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՆՎԱԶԵՑՎՈՒՄ ԵՆ ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ

Վրաստանի խորհրդարանն առաջին ընթերցմամբ ընդունեց քրեական օրենսգրքի փոփոխությունը, ըստ որի, թմրանյութերի վաճառքի բացառությամբ նվազեցվում են թմրանյութերի հետ կապված մյուս պատժամիջոցները:

Օրինանախագիծն ուժի մեջ կմտնի նրանից հետո, երբ խորհրդարանն այն կհաստատի, ապա այն կստորագրի նախագահը, ու փոփոխությունը կհրապարակվի «Օրենսդրական տեղեկատուում»:

Վրաստանի արդարադատության նախարարության կողմից նախաձեռնած օրինանախագիծը նախատեսում է պատժաժամկետի մինչեւ 6 տարվա նվազեցում այն հանցագործությունների համար, որոնք նախատեսված են քրեական օրենսգրքի 260 հոդվածով, այն է՝ թմրանյութերի, դրանց փոխարկիչների ապօրինի պատրաստում, արտադրություն, ձեռքբերում, պահպանում, փոխադրում: Նույն հոդվածի երկրորդ մասով նոր տեսակի թմրանյութերի ապօրինի պատրաստման, արտադրության, ձեռքբերման, պահպանման եւ տեղափոխման համար պատժամիջոցը մնում է անփոփոխ՝ մինչեւ հինգ տարի:



ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ ՌԱՄԱԶԱՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին եւ վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, հունիսի 18-ին երկրի մահմեդականներին շնորհավորեցին Ռամազանի սուրբ ամսվա մեկնարկի առթիվ: Պետության ղեկավարները երկրի մահմեդականներին մաղթեցին խաղաղություն եւ բարօրություն:

ՆԵՐՈՒՄ՝ ՏԱՐԵՐՔԻՑ ՏՈՒԺԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀՈՐԸ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին ներում է շխնորհել Թբիլիսիում ջրհեղեղի արդյունքում տուժյալ երեխաների հորը:

Քրեակատարողական եւ պրոբացիայի նախարարության տեղեկատվության համաձայն, գերատեսչությունը այդ խնդրանքով դիմել է նախագահին: Հունիսի 18-ին բանտարկյալը ազատ է արձակվել:

Ավելի վաղ գերատեսչությունը հայտարարել է, որ նախարար Գիորգի Մղեբրիշվիլու որոշմամբ, բանտարկյալին տրվել էր ընտանիքի հետ հանդիպելու հնարավորություն: Նախարարը նրան անձամբ ուղեկցել էր տուն, տանտիրուհուն փոխանցել իր աշխատավարձով ծրարը եւ խոստացել վաղաժամկետ ազատելու մասին դիմել երկրի նախագահին:

ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ՊԱՆԿԻՍԻԻ ԿԻՐՃՈՒՄ

Վրացի ուժայինները Պանկիսիի կիրճում ձերբակալել են հինգ հոգու, որոնց թվում է «Իսլամական պետության» (ԻՊ) դաշտային հրամանատարներից մեկի՝ Թարխան Բատիրաշվիլու, որն ավելի հայտնի է որպես Օմար ալ Շիշանի, զարմիկը: Հատուկ գործողությունը, որին մասնակցել են իրավապահ մարմինների շուրջ 100 աշխատակիցներ, շարունակվել է մի քանի ժամ, հաղորդել է «Ինտերֆաքսը»: Բացի Թարխան Բատիրաշվիլու ազգականից, ուժայիններին հաջողվել է բռնել Գայոզ Բորչաշվիլուն՝ Վրաստանում ԻՊ-ի ենթադրյալ ներկայացուցչին: Ձերբակալվածներին կասկածում են ԻՊ-ի հետ կապերի եւ տեղացի բնակիչների հավաքագրման մեջ:

Վրացական լրատվամիջոցների տվյալներով, ահաբեկչական խմբավորման հետ կապված անձանց ձերբակալումներ են կատարվում Թբիլիսիում եւ Թելավիի շրջանում:

ՆԱՏՕ-Ի ՎԱՐԺԱՆՔՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ՝ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

ՆԱՏՕ-ի վարժական կենտրոնը, որտեղ պատրաստություն են անցնելու դաշինքի անդամ եւ գործընկեր երկրների զինծառայողները, կբացվի Թբիլիսիի մերձակա Վազիանիի ռազմակայանում, ենթադրաբար՝ մինչեւ տարեվերջ: Այդ մասին հայտարարեց Վրաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-մայոր Վախթանգ Կապանաձեն:

Նշենք, որ ընթացիկ տարվա հունվարին Վազիանիի ռազմակայան էր այցելել ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Ալեքսանդր Վերշբոուն: Նա հետեւել է ցուցադրական զորավարժություններին եւ բարձր գնահատական տվել վրացի զինվորականների պատրաստությանը: «Մենք շատ ակտիվորեն ենք համագործակցում այդ ուղղությամբ, արդեն գրասենյակ է հատկացվել պաշտպանության նախարարությունում, որտեղ մարդիկ նստելու եւ աշխատելու են ապագա կենտրոնի հարցերի վրա: Ես վստահ եմ, որ դա լինելու է Վրաստանի եւ ՆԱՏՕ-ի ամենահաջողված նախագիծը»,- հայտնեց Վախթանգ Կապանաձեն:

Վրաստանում ռազմական կենտրոնի բացումը պլանավորված է այն միջոցառումների փաթեթի շրջանակներում, որոնք աջակցում են ՆԱՏՕ-ին անդամակցելու Վրաստանի ձգտմանը: Այդ փաթեթը հաստատվել է Դաշինքի՝ 2014 թվականի սեպտեմբերին Ուելսում տեղի ունեցած գագաթաժողովի ընթացքում:

ՏԱՐԵՐՔ

ՆՄԱՆ ՋՐՀԵՂԵՂ ԹԲԻԼԻՍԻՆ ՉԻ ՀԻՇՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կառուցեցին ավտոմայրուղի, ինչի համար էլ Վերե գետակը այդ հատվածներում տեղ-տեղ ուղղեցին ստորգետնյա թունելի մեջ, թեպետ դեռ այն ժամանակ էլ մասնագետները հայտարարում էին կառույցի վտանգավորության մասին, քանզի սովորաբար սակավաջուր գետակը անկանխատեսելի էր:

Ցավոք, ժամանակին մասնագետների նախազգուշացման վրա ուշադրություն չդարձրին եւ տեղի ունեցավ այն, ինչը նվազ սպասելի էր: Սակավաջուր գետի վարարումն իրոք վիթխարի էր: Այն դուրս գալով հունից, ջրածածկ էր արել շրջակա տարածքը, ավերման վտանգի տակ դնելով բնակելի շենքերը: Կործանարար ալիքը ավերեց կենդանաբանական այգին եւ թափառական շների ապաստարանը, որտեղ գրեթե բոլոր շները խեղդվեցին:

Աննախընթաց ջրհեղեղը գրեթե լրիվությամբ կործանեց մայրաքաղաքի կենդանաբանական այգին: Դեռեւս ստույգորեն հայտնի չէ, թե որքան է խեղդված կենդանիների քանակը, քանզի այգու տարածքը դեռեւս ջրածածկ է: Ջրհեղեղի զոհերի թվում են նաեւ կենդանաբանական այգու երեք աշխատակիցները: Զոհվածների թվում է մոտ մեկ ամիս առաջ առյուծի հարձակումից տուժած աշխատակցուհին: Կենդանաբանական այգու տարածքում հայտնաբերվել է եւս մեկ դիակ, թեպետ այգու վարչակազմում հայտարարեցին, որ նա իրենց մոտ չի աշխատել:

Հինգշաբթի օրը կեսօրին տարածված տեղեկատվությունից հայտնի դարձավ, որ տարերքից մահացել է 19 մարդ, որից երկուսը՝ անչափահասներ:

Զոհվածների թվում են Թբիլիսիի Գ.Սվանիձեի № 11-ում բնակվող, Վրաստանի քաղաքացի չորս հայեր, քույրեր՝ Սվետլանա եւ Լիանա Եղիազարովները, նրանց հորեղբոր աղջիկներ, Ժաննան եւ Նանա Եղիազարովա-Փիրիլաշվիլին: Նրանց տունը լցվել է ցեխաջրով, եւ քույրերը չեն կարողացել դուրս գալ:

Ավերվել է կենդանաբանական այգին, 100-ից ավելի կենդանիներ են սատկել: Ջրի տակն անցած կենդանաբանական այգուց փախել է ավելի քան երեսուն գիշատիչ կենդանի՝ գայլեր, արջեր, վագրեր: Իշխանությունները բնակիչներին հորդորել են չլքել տները: Փախած կենդանիների մի մասին վնասազերծել են փողոցներում եւ վերադարձրել կենդանաբանական այգի, մյուսներին հարկ է եղել գնդակահարել, որովհետեւ դրանք սպառնալիք էին ներկայացնում մարդկանց կյանքի համար:

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հրամանագիր է ստորագրել երկրի զինված ուժերը տեղատարափի եւ դրան հաջորդած ջրհեղեղի հետեւանքների վերացման համար օգտագործելու մասին: Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հունիսի 15-ը հայտարարել է սգո օր՝ ի հիշատակ ջրհեղեղի հետեւանքով զոհվածների:

Դեպքի վայրում աշխատում են պարեկներն ու փրկարարները: Հեղեղի հետեւանքով քաղաքի մի շարք թաղամասերում դադարել էր էլեկտրաէներգիայի մատակարարումը:

Մայրաքաղաքի բարեկարգման ծառայության, փրկարարների ծառայության աշխատակիցներն անմիջապես սկսեցին մարդկանց ու կենդանիների փրկության աշխատանքները: Կիրակի առավոտյան փրկարարներին միացան պաշտպանության նախարարության զորամասերը, մոբիլիզացվեցին մասնագետներ: Երկրի իշխանությունները նկատի ունենալով քաղաքում ստեղծված իրավիճակը, քաղաքացիներին կոչ արեցին խուսափել փողոց դուրս գալուց:

Տարերքը ոչնչացրել է Վերե գետակի ափին գտնվող ոչ մեծ տների մեծամասնությունը, ծագեց այդտեղ կառուցած բազմահարկ շենքերի բնակիչների էվակուացման անհրաժեշտությունը: Ջրհեղեղի հետեւանքով վնասված մեքենաների ստույգ թիվը դեռեւս հայտնի չէ:

Լրիվությամբ կաթվածահար էր եղել Քուռ գետի աջափնյակը, թեպետ ամենածանր իրավիճակը ստեղծվել էր այսպես կոչված նոր ճանապարհի վրա: Այն որոշ հատվածներում լրջորեն տուժել է, իսկ առանձին տեղամասերում լրիվությամբ ոչնչացվել:

Ինչպես նշեցինք, ջրհեղեղից զգալիորեն տուժել է Թբիլիսիի Սաբուրթալոյի գերեզմանատունը: Հոսքերը քանդել են մի քանի տասնյակ շիրիմներ:

Ողջ գիշերվա ընթացքում Թբիլիսիի փողոցներում էին գտնվում՝ ինչպես քաղաքապետարանի, այնպես էլ Վրաստանի կառավարության անդամները: Լուսաբացին անցկացվեց ճգնաժամի կառավարման հանձնաժողովի առաջին նիստը, որի ընթացքում կանխագծվեցին իրականացվելիք աշխատանքների ծավալները: Քննարկվեցին տուժյալներին օգնություն ցուցաբերելու ուղղությամբ իրականացվելիք ծրագրերը: Տարերքի վայր այցելեցին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին: Երկրի նախագահը հայտարարեց, որ տուժյալների օգնության համար նախագահական հիմնադրամից կհատկացվի օգնություն:

ՄԵՂԱՎՈՐՆԵՐԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՆԹԱՐԿՎԵՆ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու կարգադրությամբ, ջրհեղեղի պատճառները բացահայտելու համար, ստեղծվել է աշխատանքային խումբ՝: Տարերքի հետեւանքների վերացման արտակարգ շտաբի նիստին վարչապետը նշեց, որ ջրհեղեղը, հնարավոր է՝ տեղի է ունեցել այն պատճառով, որ ափերից դուրս եկած Վերե գետակը պարփակվել է թունելներում:

Ղարիբաշվիլին չի բացառել, որ տեղի ունեցածի հետաքննությանը կներգրավվի դատախազությունը: «Ով էլ որ լինի՝ պետք է պատասխանատվություն կրի: Մենք չենք մտածում միայն այս կամ այն անձի պատասխանատվության մասին: Անհրաժեշտ է պարզել իրական պատճառները, որպեսզի խուսափենք տեղի ունեցածի կրկնվելուց»,- հայտարարեց վարչապետը:

ՊԱՇԱՆՁԵԼ ԵՆ ՋՐՀԵՂԵՂԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՇՏԱՊ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Վրաստանի խորհրդարանը կոչ է արել հետաքննչական մարմիններին՝ արագացնել հունիսի լույս 14-ի գիշերը Թբիլիսիում ջրհեղեղի հետեւանքով բազմաթիվ զոհերի ու ավերածությունների պատճառների հետաքննությունը:

«Խորհրդարանը դիմում է հետաքննչական մարմիններին՝ առավելագույն սեղմ ժամկետում ավարտել Թբիլիսիում ջրհեղեղի պատճառների հետաքննությունը»,- հունիսի 15-ին լրագրողներին ասել է խորհրդարանական մեծամասնության ներկայացուցիչ Աննա Միրոտաձեն:

Նա հայտնեց, որ հունիսի 15-ին որոշում է ընդունվել խորհրդարանի կողմից ջրհեղեղի հետեւանքով տուժածների ընտանիքներին 1 մլն լարի փոխանցելու մասին: «Բացի այդ, խորհրդարանում մասնագետների լսումներ կսկսվեն Վրաստանի իրադրության շուրջ՝ շրջակա միջավայրի անվտանգության առումով»,- հավելեց Միրոտաձեն:

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ ԿԱՐԳ՝ Ի ՀԻՇԱՏԱԿ ՋՐՀԵՂԵՂԻ ՁՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ

Հունիսի 15-ին Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա 2-րդը Սիոնիի մայր տաճարում անցկացրեց Թբիլիսիի ավերիչ ջրհեղեղի զոհերի հոգեհանգստի արարողությունը: Նախքան հոգեհանգստյան կարգ մատուցելը, կաթողիկոսը քարոզով դիմեց ներկաներին:

ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՅՈՒՄ ՁՈՀՎԱԾՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

Հունիսի 17-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, ճգնաժամերի կառավարման խորհրդի նիստում հայտարարեց, որ Թբիլիսիում ջրհեղեղի ժամանակ մարդկանց փրկելիս զոհված փրկարարի ընտանիքը կստանա 45 հազար դոլար: «Այդ հերոսի ընտանիքին գումար կհատկացվի 100 հազար լարիի չափով, եւ նրա ընտանիքը ամսական գումար կստանա»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Ավելի վաղ Վրաստանի իշխանությունները հայտարարել են, որ տարերքի հետեւանքով զոհվածների ընտանիքներից յուրաքանչյուրը կստանա 10 հազար լարի, նյութական օգնություն կցուցաբերվի նաեւ մյուս տուժածներին:

Վարչապետը շնորհակալություն հայտնեց բոլոր նրանց, ովքեր օգնել են հաղթահարել Թբիլիսիում ջրհեղեղի հետեւանքները:

«Ես խնդրում եմ նախագահի՝ պետական հատուկ շքանշաններով պարգեւատրել բոլոր այն փրկարարներին, ոստիկաններին ու կամավորներին, ովքեր հերոսություն են դրսեւորել վերջին օրերին: Ես միջնորդությամբ նախագահին կդիմեմ այն բանից հետո, երբ կներկայացնեմ այդ մարդկանց ցուցակը»,- հայտարարեց վարչապետը:

Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին հայտնեց, որ Թբիլիսիում ջրհեղեղից տուժածների համար ավելի քան 4,2 մլն լարի (1,8 մլն դոլար) նվիրատվություններ են ստացվել պետական գանձարանի եւ առեւտրային բանկերի հաշիվներին:

«Ներկա պահին պետական գանձարանի եւ առեւտրային բանկերի հաշիվներում ստացվել է ավելի քան 4,2 մլն լարի: Սրանք միայն նվիրատվություններ են, այդ թվում՝ ֆիզիկական անձանց նվիրատվությունները կազմել են 1,7 մլն լարի, 31 հազար դոլար եւ 1000 եվրո»,- նշեց Խադուրին:

Կառավարության կարգադրությամբ, պետական բյուջեից հատկացվել է 10 մլն լարի, որն արդեն փոխանցվել է Թբիլիսիի քաղաքապետարանին»,- ասաց ֆինանսների նախարարը:

Վրաստանի ֆինանսների նախարարը հայտնեց նաեւ, որ զոհվածների ընտանիքներին օգնություն ցուցաբերելու համար երկրի նախագահի պահուստային ֆոնդից հատկացվել է 200 հազար լարի, իսկ կառավարության պահուստային ֆոնդից ներկա փուլում արդեն հատկացված է 150 հազար լարի:

Նշենք, որ, ըստ վերջին տվյալների, զոհվել է 19 մարդ, վեց բնակիչ անհայտ կորած է համարվում:

ՏԱՐԵՐՔԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԾՄԱՆ ՄԻՏՈՒՄԸ ՄԻԱՎՈՐԵՑ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆԸ

Ողբերգության վայր, արդեն հունիսի 14-ից, հազարավոր թբիլիսցիներ, քաղաքապետարանի բարեկարգման ծառայության աշխատակիցների, փրկարար ջոկատների հետ միասին ակտիվորեն ներգրավվեցին փրկարար եւ մաքրման աշխատանքներին: Կամավորական խմբերը օրուգիշերվա աշխատակագով, առանց ընդհատման գործում էին աղետի ամենածանր գոտիներում՝ «Մզիուիի» մանկական զբոսայգու, Թբիլիսիի կենդանաբանական այգու տարածքում, Սվանիձեի փողոցում ու դրան հարող տարածքներում: Կամավորների թվում էին թբիլիսաբնակ հարյուրավոր հայեր, «Հայարտուն» կենտրոնի երիտասարդական միության անդամներ, հանրային դպրոցների բարձր դասարանցիներ, ուսանողներ...

Չորս օրվա ընթացքում կամավորների, փրկարարների ջանքերով իրականացվեցին մեծ ծավալի աշխատանքներ, միայն համաճարակի բռնկման սպառնալիքը իշխանություններին հարկադրեց սահմանափակել կամավորական խմբերը: